

ամէն ինչ անոր պատմեցին և Սոկրատ պատմիչին գըրածին նայելով՝ Տաճարին շինութենէն հրաժարեցան։ Յուլիանոս քրիստոնէական կրօնին հակառակ ըլլալով՝ սկսաւ չարչարել քրիստոնեաները, եւ լսած ըլլալով հրէութենէ դարձող Կիւրեղ եպիսկոպոսի համբաւը և թէ անիկա է որ Հեղինէի օրով Գողգոթայի մէջ գտաւ Քրիստոսի խաչը, ոխացաւ անոր դէմ՝ եւ անոր մօրը հետ իր մօտ բերել տուաւ և բազմադիմի հարցափորձեր ընելէ վերջ, սաստիկ տանջանքներով նահատակել տուաւ Երուսաղէմի մէջ իր մօրը՝ Աննայի հետ։

Աւանդութիւնը կ'ըսէ թէ Յուլիանոս նախ կտրել տուաւ Կիւրեղի աջ ձեռքը «զի վբազումս դարձոյց ասէ ի դիցն պաշտելութենէ գրով ձեռինդ այդորիկ և մկրտեաց» (Լ. Վ. Ս. հատ. Բ. էջ 433)։

Իսկ Ս. Երկրի աւանդութեան համաձայն, Կիւրեղ եպիսկոպոսի նահատակութեան ժամանակ անոր աջ ձեռքը կտրուած է այն քարին վրայ որ կը գտնուի Բեթանիայէն Երուսաղէմ վերադառնալու ճանապարհին վրայ և այն տեղւոյն մօտը կը յիշատակուի Կիւրեղի գերեզմանը ինչպէս և մօրն Աննայի։

Նիկողայոս եպս. Ակիւրմանցի (1483) կը յիշէ այս աւանդութիւնը իր Տևօրիկնակսն Ս. Տեղիք խորագրով ուխտատեղեաց ցանկին մէջ. «ի դառնալն յԵրուսաղէմ տեղիքն թղենուոյն, զոր Տէրն չորացոյց. վէմն ուր զսուրբ Կիւրղին զձեռն ի վերայ հատին, Կիւրղի գերեզման և մօրն Աննայի» (Տպ. Վենետիկ, 1896, էջ 17)։

2. Եւրփիոսի վանքին աւանդութիւնները. — Եւթիմիոս (377–473) Մելիտինեցի էր, հայազգի և ազնուական ընտանիքէ. իր ուսումը առած էր Մելիտինէի ընծայարանին մէջ. 405 ին Երուսաղէմ եկած է